**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**19 նոյեմբերի 2018թ.** **N 107-Ա**
**ք.Երևան**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 84-րդ և 85-րդ հոդվածների պահանջներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների կողմից Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակների գրանցման վերաբերյալ առարկություն չի ներկայացվել՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն առանց քվեարկության

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Գրանցել Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար:
2. Հայաստանի Հանրապետական կուսակցության տարածքային ընտրական ցուցակները համարել գրանցված:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. Մուկուչյան**